1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կադաստրի կոմիտե

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է 5 մայիսի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Գեղհովիտ հողամաս

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ Կառավարության 23/03/2006թ. N 490-Ն որոշում, Միավորման դիմում 30/04/2021թ.

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-027-0401-0021, 05-027-0401-0021
Մակերեսի չափը (հա)՝ 2.19773, 0.04927
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արոտավայր, Այլ հողատեսք
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 05052021-05-0032, գաղտնաբառ՝ LTSAKBTSB8XT**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Արոտավայր 2.19773 հա, այլ հողատեսք 0,04927 հա:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 05052021-05-0032, գաղտնաբառ՝ LTSAKBTSB8XT

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Գավառ,Կենտրոնական հրապարակ N7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ.փոստ gegharkunik@mta.gov.am


**N______**

**------- -----------------------2023թ.**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովեյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ ՀՀ վարչապետի 2001թ.օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.10.2023թ. թիվ 89 դրական եզրակացությունը:

Առաջարկվում է համայնքի ավագանու նիստում հաստատել «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշումը և մարզպետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն:

Առդիր՝ 6թերթ:

11.10.2023

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Հարգանքներով՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ


ՔՀԵԿ վարչության
Հողաշինության Բաժին Մ.Ղուրշուդյան
Հեռ.060650611

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
**DEPUTY MINISTER**

**0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,**
**0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am**

N 34/14.3/12640-2023

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ**

*Ի պատասխան Ձեր 18.05.2023 թ.*
*հմ.ՎՏ/14.1/14388-2023 գրության*

**Հարգելի՛ պարոն Տերտերյան,**

Հայտնում ենք, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2.19773 հա և 0.04927 հա (ծածկագիր՝ 05-027-0401-0021) հողամասում նախարարության մասնագետների կատարած տեղազննությամբ պարզվել է, որ պատմության և մշակույթի հուշարձաններ, ինչպես նաև հնագիտական օբյեկտների արտաքին նշաններ և հետքեր չկան, ուստի նախարարությունը չի առարկում նշված տարածքի նպատակային նշանակության փոփոխությանը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի:

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի № 438 որոշման 43-րդ կետի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆ**

23.05.2023

X 

ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆ

Signed by: KOCHARYAN ALFRED 3002890618

Կատարող՝ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության
հուշարձանների պահպանության տարածքային գործունեության համակարգման բաժնի փորձագետ
Նորիկ Հազեյան, հեռ.՝ (+374) 93-637-019

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան -0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

**№ ՎՏ/14.1/30953-2023**

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին
-----------------------------------

***Ի գիտություն:***

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Կ.Սարգսյանին

Հարգելի´ պարոն Սարգսյան

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների` Ձեզ է ներկայացվում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.10.2023թ. թիվ 89 դրական եզրակացությունը:

Խնդրում ենք Ձեզ այն սահմանված կարգով փոխանցել Մարտունի համայնքի ղեկավարին և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն` համայնքի ավագանու «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին»

որոշումը հաստատվելու և իրավունքի պետական գրանցում ստանալու դեպքում:

Միաժամանակ, առաջարկում ենք Մարտունի համայնքի ղեկավարի ուշադրությունը հրավիրել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության **23.05.2023**թ. թիվ **34/14.3/12640-2023** և Քաղաքաշինության կոմիտեի **18.08.2023**թ. թիվ **06/11.2/10771-2023** գրություններով ներկայացված պայմաններին:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

11.10.2023

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: TERTERYAN VACHE 1201620635

Վ. Տերտերյան

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ

Կատարող՝ Տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,
Ծ.Նահատակյան
Հեռ. **010 515-127**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

------------------------- N -------------------------

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
պարոն Վաչե ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

2023 թվականի օգոստոսի 15-ի
NԱՍ/14.1/24737-2023 գրության

Հարգելի պարոն Տերտերյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող 05-027-0401-0021 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.19773 հա մակերեսով արոտավայրերը և 0.04927 հա մակերեսով այլ հողատեսքերն՝ օգտակար հանածոների՝ բազալտի արդյունահանման համար, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի փոխելու առաջարկությանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իր գործառույթների շրջանակում սկզբունքային առարկություններ չունի՝ հետագա գործառույթները ՀՀ օրենսդրության ու նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան իրականացնելու, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառելու պայմանով:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
կատարող Լիլիթ Գևորգյան

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 89

**ք. Երևան** **09.10.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/12640-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.6/8519-2023, ՀՀ էկոնոմիկայի 03/9695-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/10771-2023 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/6950-2023 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Մարտունի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից **2.19773 հա և 0.04927 հա** արոտավայր և այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 05-027-0401-0021) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան